վրդ. Որոտնեցիին, (✻ 1386). մեր եկեղեցիին բազմարդիւն վարդապետներէն մին. 1387ին յաջորդ կը կարգուի Որոտնեցիին Տաթեւի մէջ։ Կը մնայ Մեծոփի եւ Արճէշի վանքերը (1408-9), կը վախճանի 1410ին, Ս. Ստեփանոսի ածնի օրը, և մարմինը կ'ամփոփուի Տաթեւի վանքին մէջ (Ձեռ. Ցայտմ. 27 ապր. տեսնել իր տապանագիրը Հ. Հայրենեաց. Գիրք Ե.)։ Մասնաւոր զաւազանի և ծայրագոյն վարդապետի իշխանութեան կանոնը պատրաստած է Գրիգոր վրդ. Տաթեւացին։

Գրիգոր վրդ. Որոտնեցիին հետ 1373ին ուխտաւորութեամբ այցելած է Ս. Յակոբի վանքը՝ ուր նոյն վարդապետէն, ըստ Ցայտմաւուրաց կ'ստանայ կուսակրօն քահանայութեան կարգը, եւ Երուսաղէմէն մեկնելէն յետոյ, դարձեալ նոյն վարդապետէն կ'առնու վարդապետական զաւազան Եկեղեաց զաւառին մէջ։ Տաթեւացի Գրիգորի գրչութեամբ Բինկայի (Ակն) Ս. Հրեշտակապետ եկեղեցիին մէջ գտնուող ձեռագիր Աւետարանի մը յիշատակարանէն կը ճշդուի որ նոյն վարդապետին կողմէն Ս. Յակոբի այցելութիւնը տեղի ունեցած է 1373ին, և հոն գրած է նոյն ձեռագրին յիշատակարանը հետեւեալ պարունակութեամբ. «ով եղբայր. զյիշատակարանս յետոյ գրեցի յԵրուսաղէմ Ս. Քաղաքս և կարի արտորանօք ի մեծի հինգշաբթւոջ աւուրս». (Հ. Ակնայ. էջ 99). Տաթեւացիին երկասիրութիւնները բազմաթիւ են. անոնց ցուցակը կուտայ մեզ Ղազար վրդ. Զահկեցի (յետոյ կթղ.) իր Դրախտ Ցանկաց գրքին մէջ (էջ 641)։

ԳՐԻԳՈՐԻՍ ՎՐԴ. ՓԻԼԻՍՈՓԱՅ.— Մբ. 1425 ին Լսպ. (ՄՁ. թ. 67) Սարգիս գրքի յիշատակարանին համաձայն։

ԳՐԻԳՈՐ ՎՐԴ.— Մբ. 1716 ին. Փկե.։

ԳՐԻԳՈՐԻՈՍ ՔՀ. ԲԱԼՍԱՄ.— Կամենիցի մէջ Լեհաստանի Հայոց բռնի միութեան խնդիրներուն ժամանակ Բալսամ քհ.ին անունն ալ խառնուած է. և կը թուի թէ՝ լսաինացած է։ Գրիգորիոս քհ. շատ տարիներ բնակած է Ս. Յակոբի վանքին մէջ. Կամենեցի դատաւորք կը յայտարարեն Գրիգորիոս քհի. մասին. «... ոչ երբեք քարոզեալ իցէ նորա այսպիսի էնչ (բաժակին մէջ ջուր խառնել) ի Հայս և յԵրուսաղէմի, ուրանօր եկայ ամս բազումս» Եայլն. (Բմկ. էջ 90)։

ԳՐԻԳՈՐ ՔՀ. ՋՈՒՂԱՅԵՑԻ.— 1758ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբ։